

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԻՆՏԵՐՆԻ ՏԱՐԻ

ՄՇԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐԱՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Yiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առ շաբաթը):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

կարգադրելու 10 կոպէկով:

Տէլէֆոն № 258.

Շուշանիկ Եւանգելիան իր գաւակներէն հետ խորին ցաւով յայտնում է ազգականներին և ծանօթներին իր սիրելի ամուսնու:

ՄԻՔԱՅԻԼ ԲՈՒՂՊԱՆԵԱՆ ԵՒՆԿՈՒԼԵԱՆԻ

Մահը Հոգեհանգիստը տեղի կունենայ ուրբաթ և շաբաթ երկիրային ժամի 6-ին, հանգուցեալի բնակարանում (Судебная ул., № 34, д. Мирзоева), իսկ յուղարկուածութիւնը դէպի Մոզմու. Գէորգ եկեղեցին—կիրակի, ժամը 10-ին:

ԲՈՒՂՊԱՆԻ ԲՈՒՂՊԱՆԻ

Կրթական միջոցներ. — ՆՆՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Կրթական միջոցների դէմ. Մասնագործութիւն. Յրանախանայի նկարչների ցուցահանդէսը. Նամակ Կարսից. Նամակ Աշտարակից. Նամակ Նոր-Բայազետից. Նամակ Խմբագրութեան. Նոր-Քին լուրեր. — ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Կ. Գործի լրագրի մասին. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒԱՆ ԳԻՐԱՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ. — ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ Կարսի առուներ:

ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Մեր բոլորի համար թանգ է ժողովրդի զարգացումը, սակայն ինչով մենք կարող են նպաստել այդ զարգացման: Երբ ժողովուրդը ազէտ է և զուրկ նիւթական ապահովութիւնից և բարոյական միջավայրութիւնից, ինչով կարող ենք բարձրացնել նրա վիճակը:

Կրթող, լրագիր, բեմ, հասարակական կեանք—ասա այն գործօնները, որոնք կոչված են ազակցելու ժողովրդի կրթութեան և զարգացման գործին:

Կովկասը կրթութեան կողմից ամենայնտեղ ընկած տեղերից մէկն է: Նրան հարկաւոր են դպրոցները թէ քաղաքական ուսումը, թէ գիտութիւնները և թէ զանազան արհեստներ տարածելու համար ազգաբնակչութեան բոլոր խաւերում:

Բեմը, հանդէս հանելով մի շարք կենսական երևոյթներ իրանց ընթացող գծերով, ներկայացնելով հասարակութեան մէջ տիրող հայեացքները և նրանց ընդհարումները, պէտք է նիւթ ծառայէ հասարակութեան համար քննութեան ենթարկելու նրա կենսի վերաբերեալ մի շարք էական խնդիրներ:

Լրագիրը, կամ ընդհանուր խօսքերով մամուլը, կոչված է ազգաբնակչութեան մէջ օրրատելու առաջ եկող հասարակական հասանքների արտայայտողը և նրանց քննա-

դատողը լինելու: Մամուլը նոյն ինքը հասարակութիւնն է: Մամուլը միջոցով հասարակութիւնը կարողութիւն ունի ամեն մի երևոյթ, ամեն մի շարժում վերլուծել, պարզարանել և բնութիւնը հնարաւորութիւն ունի մտածող մարդկանց մէջ ընդարձակ տարածութեան վրա կատարել հայեացքների փոխանակութիւն և այդպիսով ոչ միայն դառնալ ժողովրդի մտածող մասի արտայայտութիւնը, այլ և լինել մի ոյժ, որ կարող է տարածել ընդհարձակ խաւերում լաւագոյն մտածողների հայեացքները և ստեղծագործութիւնները:

Իժարադարար մեր երկրում մենք դեռ շատ քիչ ենք առաջ գնացել և չունենք ոչ բազմաթիւ դպրոցներ, որոնք լուսաւորութիւն տարածէին մեր երկրի խոշոր անկիւններում, ոչ բեմական արհեստի ընդարձակ զարգացում և ոչ բեմական գրականութեան հարստութիւն: Ինչ վերաբերում է մամուլին, նրա մէջ դեռ քիչ բաժին ունի մեր գաւառական խոլ անկիւններում ապրողը և չէ հասկացել, որ մամուլի միջոցով նա կարող էր երևան հանել իր կենսի կարիքները և ընդհանուր քննութեան նիւթ դարձնել այն խրճիղները, որոնք նրա համար դժուար լուծելի են սեփական ոյժերով:

Եթէ կուլտուրական ազդերը այսօր հասնել են նախանձելի վիճակի, նրանք շատ և շատ պարտական են այն բանին, որ իրանց կրթական միջոցների մասին լուր հոգ են տարել և այսօր քաղում են այդ հոգաբարձութեան պտուղները: Իսկ մենք ի՞նչ ենք արել:

ՆՆՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԿՈՒԻՒ ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐԻ ԴԵՄ

Մենք մի անգամ յայտնեցինք, որ Ամերիկայի

կարելի է շուտ գրաւել կամուրջները, որպէս զի կարելի թշնամու հաղորդակցութիւնը զետեմիւս ասի հետ: Մի և նոյն ժամանակ, կամ մենայով հանգստացնել քաղաքի բնակիչներին, նա ուզեց անցնել քաղաքի փողոցներով: Բայց դեռ չէր հեռացել հիւանդանոցից, երբ տներէն այնպիսի սաստիկ հրացանաձգութիւն սկսվեց, որ մի քովում նրա թիկնապահների շարքում մի քանի ձիաներ վիրաւորվեցին: Պէտք եղաւ թողնել այդ մտադրութիւնը, և Լազարեվը, յանձնելով Բաուսին մաքրել քաղաքը, ինքը գնաց դէպի Կանիլ:

Այստեղ գործերը բաւականաչափ դրոտվել էին: Տեղ հասած օգնական զօրքերը կարողութիւն էին տուել զնդապետ Կարասեօյի տիրանալ ամբողջ ձախ կողմին, իսկ զնդապետ Բուլմերլինգը նորոգեց փորձերը կենսաբանական մարտկոցը գրաւելու համար: Բայց մեր բոլոր ջանքերը զարձեղ իջուր եղան: Գնդապետ Բուլմերլինգը, մի քանի անգամ բարձրանալով պատնէշի վրա, փորձեց բանակցութիւններ սկսել զաջ բերդապահ զօրքի հետ, պահանջելով նոյն իսկ, որ իբն թողնեն մասնի զօրանոցը: Բայց բերդապահ զօրքը, որ այնպիսի պատուով և այնքան երկար պաշտպանում էր իր տեղը, մեր բոլոր առաջարկութիւններին պատասխանում էր անպայման մերժումով: Այդ

Միացեալ-Նահանգների նախագահ Բուլդոլէյթ կուր է սկսել սինդիկատների դէմ: Շնորհիւ նախագահի այդ նախաձեռնութեան՝ ներկայումս Եւրոպայում և Ամերիկայում սինդիկատների և արհեստների հարցը օրվայ հրատապ խնդիրներից մինն են կազմում: Այդ հարցը կարեւոր նշանակութիւն է ստանում և մեղ համար, ի նկատի ունենալով, որ մեր երկրում ևս սկսել են սինդիկատային ընկերութիւններ կազմակերպվել: Ի՞նչ ազդեցութիւն են գործում սինդիկատները երկրի և ժողովրդի արհեստական կենսի վրա, օգտակար թէ վնասակար են նրանք երկրի տնտեսական և արդիւնաբերական զարգացման գործի համար—տա հարցեր, որոնք լրջօրէն պէտք է զբաղեցնեն բոլոր նրանց, որոնք նախանձախնդիր են ժողովրդի և երկրի տնտեսական ու նիւթական բարգաւաճման:

Այն հանգամանքը, որ սինդիկատների կազմակերպութեան դէմ են դուրս գալիս Բուլդոլէյթ, նախագահը մի երկրի, ուր ամենամեծ ծաւալով զարգացած են սինդիկատները և արհեստները, ինչպէս և ուստական ֆինանսների միջնասր Վիտտէի պէս մի հեղինակաւոր անձն, պարզ ցոյց է տալիս, որ սինդիկատները վնասակար հետեւանքներ են արտադրում երկրի շնչահատար տնտեսական զարգացման գործի համար, և ժամանակ է անշաւաղուծել նրանց արտադրած աղետալի արդիւնքները ու սկսել այն միջազգային կուր սինդիկատների դէմ, որին հրաւիրում են այդ երկու նշանաւոր պետական անձինք իրանց հրատարակած շրջաբերականներով:

Աւելի մօտ ծանօթանանք խնդրին:

Մի քանի տասնեակ տարիներ առաջ դրամատները, բանկերը և բանկանման հաստատութիւնները մեծ ուժ ունէին: Այսօր ևս նրանք դեռ շատ նշանաւոր են իսրայում տնտեսական կենսի մէջ, բայց նրանց վիճակը նոյնը չէ, ինչ որ առաջ: Բանկերը, ինչպէս նկատում է «Новое Время» լրագիրը, մի տեսակ պետութիւն էին կազմում պետութեան մէջ, մի տեսակ միջնադարեան աւազակային բոյնք էին, որտեղից յարձակումներ էին գործվում հասարակութեան գրգռանքների, ժողովրդի ունեցածի վրա: Նրանց շատ նպաստում էր այդ ուղղութեան մէջ մի ժամանակ քաղաքատնտեսութեան մէջ տիրապետող այն ուսումը, թէ պետութիւնը չը պէտք է միջամտէ հասարակութեան տնտեսական կացութեան մէջ: Սակայն բանկերի գործունէութիւնը սթափեցրեց այդ ուսումը քաղաքային և առաջ եկաւ հզոր բեկակող բանկոկրատային անկոծուող տնտեսութեան դէմ: զգացվեց կոծուող հաստատուելու

անհրաժեշտութիւնը, և կառավարութիւնները վերջին տասնամեակում մի շարք միջոցներ մշակեցին բանկային զեղծումների առաջն առնելու համար:

Եւ մինչ կառավարութիւնները զբաղված էին այդ հարցով, վերջին տասնամեակում աննկատելի կերպով սկսեց ծնվել և զարգանալ մի նոր կազմակերպութիւն, որը նոյնպէս ոչ մի իշխանութիւն և հսկողութիւն չէ ճանաչում և նպատակ ունի ինքնակամ կերպով տնօրինել հասարակական օտարաւորը: Այդ նոր կազմակերպութիւնը արդիւնաբերական սինդիկատներն են, կարեւորները (խոշոր ընկերակցութիւններ) և սինդիկատի նոր ձեւը՝ արհեստները:

Սկզբում այդ նոր կազմակերպութիւնը նոյն իսկ օգտակար և ցանկալի համարվեց, որովհետեւ սինդիկատները կարգելու նպատակով, առում էին նրա հիմնադիրները և կազմակերպողները, այն է, որ կանոնաւորվի արդիւնաբերութիւնը և խափանչի չափազանց արտադրութիւնը կամ գերարտադրութիւնը: Նոյնը պատահեց և մեր երկրում, զխաւորապէս Բագուում, առեւտրական կամ նախարկեալաբերական մի քանի ֆիրմաներ միանալով սինդիկատ էին կազմում, սակայն որ դրանով կը կանոնաւորեն նախ կամ այս և այն ապրանքի գինը և թոյլ չեն տայ, որ գերարտադրութիւն լինի ու դրանով վնաս կըրէ հասարակութիւնը:

Սակայն սինդիկատների աղետալի հետեւանքները ժողովրդական տնտեսութեան ճամար շուտով յայտնվեցին: Դուրս եկաւ, որ սինդիկատները ոչ թէ զօրեղ միջոցներ են կապալաւորատական կազմակերպութեան դէմ կուրելու համար, ինչպէս շատերը կարծում էին, ոչ թէ կարող են շտկել կամ զոնէ մեղմացնել արտադրութեան մէջ տիրող այժմեան անիշխանութիւնը, այլ, ընդհակառակը, նրանց ուղղակի և անուղից նպաստում է արտադրութեան, արհեստի կերպով կազմակերպվում է սպառողի շահագործութիւնը՝ արտաւտական կերպով թանկացնելով արհեստների գները, այսինքն, որ սինդիկատները ահագին հարստութիւն են դրոյում սպառողի, ժողովրդի հոշուն: Հէջն այն մի տեղ սինդիկատ է կազմվում այս և այն արդիւնաբերական ընկերութիւններից, այնտեղ իսկոյն բարձրանում է արդիւնքի գինը կրկնակի, եռապատիկ, և այն ապրանքը, որ առաջ սպառողը գնում էր պատեցին մեր զինուորները և իրքեւ գերիներ ուղարկեցին բանակը: Կանիլ, վերջապէս, ընկաւ վերջին մարտկոցը, որ այնքան արիւն և կենսաբեր էր իսկ մեզանից, գրաւվեց առաւօտեան ժամի 4-ին, երբ արդէն սկսել էր լուսանալ: Լազարեվը սպասեց, թէ ինչ լուրեր կը գան քաղաքից: Իսկ այնտեղ ահա ինչ տեղի ունեցաւ:

Լազարեվի գնալուց յետոյ գնդապետ Բաուսը յարձակվեց այն տների վրա, որտեղից հրոսպանվածներ էին արձակում և իր ետանդուն գործողութիւններով հարկադրեց աւելի քան 650 թիւրք զինուորներին զէնքերը յանձնելու: Ետո սպանվածներ կային, բայց դրանց մէջ չը կար և ոչ մի հատ կին, ոչ մի հատ երեխայ, թէև յարձակման ենթարկված տներում շատ կային կանայք և երեխաներ: Մեր շտաբի այդ գիծը Լազարեվը բարձր էր դառնում և երբէք չէր մտածում նրան: Ետևում դրաված էին և Սուլալարին ու Արաբ-Թարխան Եւ երբ լուսացաւ, առաջին բանը, որ գծագրվեց պարզ երկնակամարի վրա, 40-րորդ դիվիզիայի երեք գնդերի դրոշակներն էին, որոնք ծածանվում էին Կարապղի և Արաբ-Թարխայի վրա: Այժմ բոլոր ամրոցները, որոնք գտնվում էին Կարապղի ալ Կախին, մեր ձեռքին էին. քաղաքի բոլոր կարեւոր կէտերը գրաւել էր Բաուսը:

